



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 22 » 06 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 61

Ձեռնարկողը՝

Շ. Մկրտչյան
Ք. Երևան, Կոմիտաս7/12, բն 19

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 61

«22» 06 2018թ.

Քաղաքացի Շ. Մկրտչյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	Քաղաքացի Շ. Մկրտչյան
Նախագծող՝	<<Անառչ>> ՍՊԸ. Ա/Ձ Ա.Գալոյան
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա համայնք
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Քաղաքացի Շ.Մկրտչյանը նախատեսում է Երևան քաղաքի Սեբաստիա փողոցի 14,143,141/4,45,14/3 և Միքայելյան 9,9/3,7/1,7 հասցեներում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման աշխատանքներ:

Նախագիծը իրականացվել է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, 15.05.2018թ տրված N 01/18-07/1-Մ -3437-325 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շինարարական նորմերի ու կանոնների:

Առևտրի կենտրոնի մասնաշենքը նախատեսված է վերակառուցել և ընդլայնել ք.Երևան, Սեբաստիա 14,143,141/4,45,14/3, Միքայելյան 9,9/3,7/1,7 հասցեներում հատկացված հողատարածքում: Շինությունը 5 հարկանի է, հատակագծում ունի 153.7x157.5մ առանցքային չափեր:

Շինությունը իրենից ներկայացնում է միաձույլ ե/բետոնե կարկաս 8մ երկայնական և 9մ լայնական սյուների քայլով:

Շինության գոյություն ունեցող մասի 1 հարկի մակերեսը կազմում է 11.600 մ², իսկ ավելացող մասի մեկ հարկի մակերեսը կազմում է 12.900 մ², որից հաշվարկված է 36 ամսվա շինարարության տևողություն ըստ ՇՆԵՎԿ 1.04.03-2008-ի նորմերի:

Ըստ շին կազմակերպման շինարարությունը կատարվում է 2 փուլով նախապատրաստական փուլ և հիմնական փուլ: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում



- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են երկու հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Շ. Մկրտչյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Ա. Մինասյան